

աւելի՛ գրական – պատմական, ուր կը մտցնէ նաեւ ընկերաբանական հարցն ալ, և ընդհանուր տեսութիւններն կ'ընէ ժամանակակից գրական անձաւորութեանց վրայ. հոգեբանական հայեցակէտը՝ ինչպէս և արուեստագիտական մասը՝ խորութեան և խնամքի պակասը կը զգացնեն, հատորը կարդալէ՛ք վերջ տպաւորութիւնը կ'ուռնանաւ աւելի արտաքին ուսումնասիրութեան մը, լրագրական յօդուածի մը նման։ Պ. Զակոբեան որոշ կանխակալ գաղափարներ¹ ունի, սկիզբէն կազմած և անոցմով սնած, և որոնք իրեն կ'ընկերեն ուսումնասիրութիւններու մէջ և առաջնորդ կ'ըլլան, և որոնք երբեմն արգելք ալ կ'ըլլան հեղինակ մը առարկայապէս ըմբռնելու և դատելու։ Ինք պաշտամունք մ'ունի հանդէպ Դուրեանի, և այս կը բաւէ Բանաստեղծին մեծութեան համար. մինչ կը թուի նուազ համարանք տաճել հանդէպ թէրգեանի, ինչ որ վերջնայ քիչ մը տուժել կու տայ իր համբաւին մէջ։ Ատով ըսել չեմ ուզեր թէ ինք չէ ըմբռնած Դուրեանը, որ իր ինքնասպտութեան և երազկոտ մղձաւանջներով կը տիրէ ոեւ ընթերցողի վրայ, բայց չէ կրցած ըմբռնել՝ զոր օրինակ՝ թէրգեանը, Ալիսիւրը, Բագրատունին։ Ես . կը կարծեմ թէ գրական ամէն ձև և դպրոց իրաւունք ունի գոյանալու և արուեստական բարձրութեան հասնելու, բաւէ որ մշակող անձը հանճար մ'ըլլայ, տաղանդ մ'ըլլայ։ Եթէ Բագրատունին զործը անյաշող մնայ՝ ոչ թէ « կեղծ դասականութեան » մը համար էր (Պ. Զակոբեան դասականութեան շատ բարեկամ չ'երևիր), այլ որովհետև իր մէջ կը պակսէր ստեղծագործող տաղանդը։ Պ. Զակոբեան ամենեւին ըմբռնած չէ Ալիսանը (անշուշտ գրաբարի դժուարութեան պատճառաւ)։ Ալիսանի Բանաստեղծական մեծ գործը « Նահապէտի Երգերը » չեն կազմեր. բաց ի « Շուշանն Շաւարշանայ » քերթուածէն, անոնք իրենց հայրենաշունչ ոգիին և աշխարհաբար ձևին համար ժողովրդականացած և հոգևուած են։ Նահապէտի բուն ներշնչեալ Բանաստեղծութիւնը այլուր փնտռելու է, Նուազներու Ե. հատորին մէջ, « Բամբ Պանկիստի » նը. Յիշատակ մահու և մեռելոց »ը, « Հուսկի բան առ ոգին նուագուման ». ինչպէս և փափուկ կտորները Գ. հատորին մէջ, զորս Պ. Զակոբեան « բռնագործիկ » և « չոր և անկենդան գրուածքներու անապատ » կ'անուանէ (էջ 17), կ'ենթագրեմ լեզուին անհաս-

կընալիութեան համար. այս տեսակէտով Վիր-գիլիոսի լատիներէն Նիշականն ալ չոր և անկենդան պէտք է նկատել։ Բաց ասկից՝ գրական գործի մը արուեստական վարկ տուողը « իրականութիւնը »ը՝ այսինքն ներկայ կենալը չէ, այլ հանճարին կնիքը, տաղանդին ոյժը, որ անհամեմատօրէն մեծ է և հուժկու Ալիսանի՝ քան իրիմեանի մէջ։

Պ. Զակոբեանի հատորը ասով չի դադիր նպատ մը մատուցանել Դուրեանի գործը ուսումնասիրողներու համար, և մանաւանդ անոնց՝ որ կ'ուզեն Դուրեանը ճանչնալ։

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

ԱՅԼԵԻՍԵՐԻ

ԱՌՏԵԱԼԻ ՀԱՅԵՐՈՒՆ

ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

(Շար. տես Բզմ. 1922. էջ 241)

Այս է հաւաքակի ներկայիս Առտեալի Հայերուն վիճակը. կը հարցնենմ. արդար է արդեօք ըսել անոնց նկատմամբ՝ թէ Հայութեան համար կորսուած են։ Այս հարցին համոզիչ և իրաւացի պատասխան մը տալու համար՝ կը բռնեմ ընթերցողիս ձեռքէն և մտաւորական ուղեւորութեամբ մը կ'առաջնորդեմ իրեն դէպ Առտեալի Հայերը. կը տանիմ զինքը այն քաղաքներուն մէջ՝ ուր անոնք բազմաթիւ կը համարուին և կամ աչքի զարնող քանակ մը կը ձեռացնեն, զոր օրինակ Քոլոժվար (Քլուժ, Քլուզենպուրկ), Սամոռույվար (Կեռլա, Հայաքաղաք), Եդիսաթեթուպօլիս (Իպաշ-ֆալու, Էլիզապէթթիատ), Մարոշ – Վաշարէյ, Քիշտի – Վաշար, Սէպկիզ, Ճուրճով, և այլն, և այլն։ Այցելենք մի առ մի այս քաղաքներու մէջ ընտելող Հայ յերուն տունները. փոյթ չէ թէ ընթերցողս անոնց խօսած հունգար և կամ ռուման և կամ սաքսոն (գերմաներէն) լեզուները չի հասկնար։ Հարցումներ ընենք անոնց. ես թարգման կ'ըլլամ անոնց պատասխաններուն կամ գէթ զգացումներուն (քանի որ ճամբորդութիւննիս պարզապէս մտային է)։ և տուած պատասխաններէն թող ընթեր-

1. Այս կը նշմարուի Փակ իր Շանթի վերջին « Շղթա-յոսանք » թատերգութեան վրայ կատարած դրամատիկաներն մէջ. ԱՐԵՎ 1922, յունիս։

ցողս ինքն հետևեցնէ թէ այդ Հայերը՝ Հայութեան համար կորստւած ժողովուրդ կամ ազգանդամ մ'են՝ թէ ոչ:

Հայ ընտանիքի մը տունն ենք՝ կղիսաբիթուպօլսի մէջ. հոն հաւաքուեր են տեղւոյն Հայերը, որովհետեւ լսեր են թէ Արեւելքէն կամ Հայաստանէն երկու հայ եկեր են իրենց քաղաքին այցելութեան: Այդ հաւաքուած անձերու մէջ կան ծերու, նինքր ու պառաններ, պարոններ ու տիկիններ, երիտասարդներ և օրիորդներ, մանչ և աղջիկ պատանիներ ու տղեկներ: Խօսակցութիւնը կը բացուի, և հոս եղածը իբր նմոյշ մը թող ըլլայ միւս քաղաքներու մէջ ընելիք խօսակցութիւններու:

Մենք. — Բարեւ ձեզ, պատուական Հայեր. մենք Արեւելքէն եկեր ենք հոս՝ զձեզ տեսնելու և հետեւինիդ խօսակցելու:

Երբ մը (70—80 ամեայ). — Շատ, շատ բարի էկիլ իք, սիրուն Աղաջաններ. Աստուած ձեզիկ բերիլ է մեր քաղաքը. բայց մենք ինչպէս հարկեալ է չինք գիտիլ հայնակ էքսպլիքատ անիլ, դուք օգկայ կալաջի կի զրուցիլ, մինք օգկայ:

Մենք. — Փոյթ չէ. մենք ձեր լեզուն կը հասկընանք. դուք բաւական մաքուր հայերէն կը խօսիք:

Երբ. — Աղաջաս. մինք չինք խօսի, հաւը կի խօսի. մինք կի զրուցինք:

Մենք. — Հոգ չէ, թող այդպէս ըլլայ. ուրեմն ամէն հոս եղողներն ալ ձեզի պէս հայերէն կը զրուցեն:

Երբ. — Չէ, պատմելի Աղաջաս, չէ: Աս խոսածները իստովը մոռացիլ ին ինչ իշկօլան սովրիլ ին. զէրէ անժուսիը Վանքը իշկօլա կար, աշերտները կի սովրեցնէին. հիմպիկ մանօի իշկօլա բռնիլ ին. հայ իշկօլան տղայ չի քալիլ. Հոս ես ու աս ծեր պիգան (ցոյց տալով հայ պառաւ մը) կի զրուցինք հայնակ... (Գէպ ի պառաւ խօսքն ուղղելով) Ո՛ւի է քո բախտը, ինչո՞ւ հոս էկիլ չի:

Պառաւը. — Պի գայ. կի բոյինք. էպէտուն էտեւր սովրիլ է քիչ բուն քաշիլ:

Մենք (ծերուն). — Բայց ինչո՞ւ ծնողք

չեն հետամտիլ՝ որ զաւակնին մայրենի լեզուն ուսանին:

Երբ. — Լաւ չիմ հասկացիլ, բայց շաղըշիլիմ ինչ կ'ուզի ասիլ Աղաջան: (Դառնալով դէպ ի 45—50 ամեայ Պարոն մը՝ կ'ըսէ հունգարերէն) Դուն հայր ես, և ունիս երկու մանչ և մէկ աղջիկ. այս Պարոնը կը հարցընէ թէ ինչո՞ւ դուն չես պարտաւորեր զաւակներդ՝ որ հայերէն սովորեն. դուն պատասխան տուր:

Պարոնը (հունգարերէն). — Իրաւ մեծ ամօթ կը զգանք՝ ամէն անգամ որ մեր հայազգի եղբայրներէն մէկը մեր քաղաքը կու գայ և մենք չենք կրնար հետը հայերէն խօսիլ: Մեր պապերն ու մամերը իբրարու հետ տանը մէջ միշտ հայերէն կը խօսէին, ուստի ոչ միայն անոնց զաւակներն հայերէն սովորեցան խօսիլ, այլ նաև օտարազգի ծառաներն ու աղախիններն ալ հայերէն կը խօսէին: Բայց մեր հայերն ու մայրերը այն ժամանակ միայն իրար հետ հայերէն կը խօսէին՝ երբ խօսքը ծածուկ բանի մը վրայօք ըլլար, զոր չէին ուզեր որ տղաք հասկընան, իսկ սովորական խօսակցութիւնը տանը մէջ մաճառերէն էր. ուստի մենք չկրցանք հայերէն սովորիլ: Այսպէս ալ շուկան, առուտուրի մէջ Հայերէն այն ժամանակ միայն իրար հետ հայերէն կը խօսէին՝ երբ չէին ուզեր որ ներկայ Սասը (Գերմանացին) և կամ Օլախը (Ռումէնը) և կամ Հրեայն խօսածնին հասկընար, իսկ այս պարագաներէն դուրս՝ միշտ մաճառերէն կը խօսէին, որ ընտանեկան լեզունիս էր: Դպրոցի մէջ սովորած հայերէնինս ալ շուտ մոռցանք, քանի որ արեւի չունէինք նոյնը գործածելու: Ասկէ զատ՝ դպրոցին մէջ հիմակուան պարզ մեքտներով լեզուն չէին սովորեցնէր, որ դիւրաւ սովորէինք և դժուարութենէն չլքանէինք. կենդանի լեզունէն աւելի՝ ժամանակ կ'անցընէինք սովորելու գրաբար աղօթքներ, Պատարագի սպասարարութիւն և երգեր և ժամու մէջ Ս. Գրքէն ընթերցուածներ կարգաւ: Ուստի դպրոցական եղած ժամանակս ես ալ շատ լաւ կը կարդայի. հիմայ ալ այրբենգիմը կը ճանչնամ և կրնամ (թէ

և քիչ մը զփուարութեամբ) առանց հաս-
կընալու՝ բառերը կապել ու զանոնք գրել.
բայց խօսիլը բոլորովին մոռցեր եմ:

Մենք (մաճառերէն). — Բայց ինչո՞ւ
չէք ջանար որ գէթ ձեր գաւակներն հա-
յերէն սովորին, քանի որ հիմայ ձեր քաղա-
քին մէջ Միսիթարեան Հայր մը կայ՝ որ
թոժարութեամբ պիտի ուզէ սովորեցնել:
Դարձեալ, ունիք դուք այստեղ ձեր ժողո-
վըրդապետ քահանայն՝ Տէր Փր. Ալէքսա-
նեանը՝ որ հայերէն գիտէ և կը խօսի,
անկէ ալ կրնաք օգտուիլ: Իսկ եթէ անոնք
ժամանակ ու կամք չունին սովորեցնելու՝
ձեզի համար զփուարին պիտի չըլլայ (քիչ
մը դրամական զոհողութեամբ) հայերէն
գիտցող ուսուցիչ կամ ուսուցչուհի մը
վարձել, որ ձեր տղաքներն ու աղջիկները
սովորին հայերէն հասկնալ ու խօսիլ:

Պարոնը. — Ես շատ կը փափաքիմ որ
գաւակներս երթան Միսիթարեան Հօրը
քով, որ սիրով ու ձրիաբար հայ լեզուն
կը սովորեցնէ, մինչև անգամ լաւ սովորու-
ղին դրամական կամ ուրիշ տեսակ մըցա-
նակներ ալ կ'ընծայէ. բայց գաւակներս
միշտ փախուստ կու տան՝ ըսելով թէ ժա-
մանակ չունին զիմնագիտնի պարտաւորիչ
դասերինն անգամ պատրաստելու. ուստի
անհոգ են հայերէն սովորելու՝ որ իրենց
օգուտ մը պիտի չունենայ: Տեսէք ահա-
ւասիկ (ցոյց տալով մեզի՝ մերձաւորապէս
25 — 26ամեայ երիտասարդ մը) այս Պա-
րոնը, որ մեռած մեծ եղբորս տղան է,
շատ ուշիմ ուսանող մ'եղեր է, և փայլուն
քննութիւններ տալով՝ Գոլօմարի (Քլաւ-
զէնբուրգ) Համալսարանէն Օրէնսգէտ Դոկ-
տորի վկայագիր ունի: Համալսարանական
ընթացքն սկսելէ առաջ, քանի որ տեղոյս
Գիմնազիոնին մէջ կը սովորէր, կը յաճա-
խէր նաև Միսիթարեան Հայր Նիկողայոս
Ջիզգիր եպիսկոպոսին սովորելու. որովհետև
հայրը նախանձախնդիր հայ մ'էր, և տղան
ալ մտաւորական մեծ կարողութեամբ օժ-
տուած էր, որով կըցաւ օրակարգի մէջ
ձանրաբերեռուած ուսումնեքէն զուրս՝ հա-
յերէնն ալ սովորիլ: Բայց իմ որդիներս
նոյնքան մտաւոր կարողութիւն չունին,

և հազիւ կրնան իրենց քննութիւններն
անցընել. մանաւանդ թէ անցած տարի փո-
քրիկ Լօցիբաս չկըցաւ դասարանը փոխել:
Արդ, ես ինչպէս գիրենք ստիպեմ որ ան-
պատճառ հայերէն սովորին: Այսպէս ուրեմն
իմ փափաքս անպտուղ մնալով՝ տղաքս
ալ պիտի մեծնան և ինծի պէս անոնք ալ
հայերէն պիտի չկրնան խօսիլ: Եւ հաւա-
տացէք, Պարոններ, որ իմ վիճակիս մէջ
կը գտնուին քիչ թէ շատ՝ քաղաքիս մէջ
բնակող միւս հայ ծնողները:

Մենք մեզի հետ խօսող Պարոնին ըսած-
ներուն պատասխանելու բան չգտնելով՝
բաց ի ցաւակցութենէն, դարձանք իրմէ
մեզի ցոյց տրուած Օրէնսգէտ Դոկտորին,
և հայերէն ուրախակցութիւն յայտնեցինք
իրեն՝ տրուած գովաստներուն համար, զրե
թէ վստահ որ հայերէն պատասխան պիտի
ընդունէինք. բայց Դոկտորը ժմտելով նախ՝
ըսաւ մեզի հունգարերէն.

Դոկտ. — Ներեցէք, Պարոններ, սովորած
հայերէնէս քանի մը բառերու մթերք միայն
ուղեղիս մաքարին մէջ մնացեր են, ուստի
չեմ կրնար անոնցմով միտքս բացատրել.
Իսկ հայերէն կարդալու համար՝ գէթ քանի
մը ժամուան նախապատրաստութեան պէտք
ունիմ՝ որ մանկութեանս ժամանակ սովորած
հայ այբուքներին ձայնական յատկութիւն-
ները վերայիշեմ, քանի որ 15 տարիներէ
ի վեր ո՛չ հայ գրիք վրայ առիթ ունեցեր
եմ նայելու և ոչ ալ հայերէն խօսողի մը
ձայնը լսելու (կեսոյ լրջազոյն դէմք
մ'առաւ, և իբր Համալսարանական բեմի
մը վրայ կանգնած ուսուցիչ մը՝ ծանր
շեշտաւորութեամբ շարունակեց խօսելու):
— Պարոններ, ներում կը խնդրեմ. քանի
մը վայրկեան ուշադրութիւնիդ շնորհեցէք
ինծի, որովհետեւ կը փափաքիմ այս
խնդրոյն վրայօք սնուցած մտածմունքս
պարզել. — Ձեզ համար շատ բնական
բան մ'է որ Հայաստանէն Հունգարահա-
յերուս այցելութեան եկած ժամանակնիդ՝
կը փափաքիք հանդիպելու հոս Հայերու՝
որ մայրենի լեզուով խօսին ձեզի հետ,
այն լեզուով կ'ըսեմ՝ որ ներկայիս զօրախ-
տաբար արտաքին միակ կապը մնացեր է

հայ ազգիս ցիրուցան գաղութներուն՝ իրենց մայրենի հողին և ինքիւնց մէջ, Այդ ձեռն փափաքը, այո՛, ըստ ինքեան բաղձալի բան է, ինչպէս միգի ալ ցանկալի էր որ Տրանսիլուանիոյ Հայերս՝ միւս գաղթական Հայերու նման՝ գիտնայինք ու խօսէինք հայ լեզուն։ Գուցէ ոչ միայն կը փափաքէր, այլ և ձեռն խօսքերով մեր այդ սղոխու թիւնը մեզմ կերպով կը մեղադրէր և աւելցնէր պահանջ մը՝ կ'ընէր մեզմէ որ նոյնը իրագործելու հետամտինք։ Բայց ներքեցէք, խնդրեմ, ըսելու ձեզի՝ որ այդ բարի փափաքին իրագործումը՝ մեզ համար գրեթէ գրեթէ անիրագործելի փափաք մ'է։ Դեռ աւելին ալ ըսեմ. այդ փափաքը կամ պահանջը և ոչ իսկ այնքան անհրաժեշտ պայման մ'է՝ ասանց որոյ ոչ (sine qua non) Տրանսիլուանիայի Հայերս հայ համաւրուինք և իբրեւ հայ չապրինք ու չգործենք։ Սամուելովարի մէջ երբեմն հրատարակուող հունգարերէն հայաթերթին մէջ կարդացեր եմ՝ թէ Մայր-Երկրի և՛ օտար երկրի մէջ ապրող հայախօս Հայերը կ'ամբաստանեն . եղբւր զմեզ իբր թէ մենք Հունգարախայերս՝ հայ լեզուն կորուսած ըլլալովմիս՝ Հայութեան համար կորուսած տարբեր մենք։ Բայց հակառակ այդ սխալ գաղափարին՝ ներքեցէ որ հոս հանդիսապէս բողոքեմ և ըսեմ որ մենք Հունգարախայերս՝ թէ և հայերէն չենք գիտեր և չենք խօսիր, բայց պակաս հայ չենք՝ քան որչափ են ո՛րեւէ գաղթական Հայեր և նոյն իսկ Մայր-Երկրին մէջ բնակող Հայերը։ Եթէ այդ լեզուաբոսութեան պայմանին չզոյրութիւնը պիտի սամմանէ հայու մը Հայութեան չպատկանելը, ըսել է թէ ոչ մի միայն մենք Հունգարախայերս, այլ նաև Աւստրիական Գալիցիայի, բուն Լեհաստանի և Ռումանիայի (հին գաղութի) Հայերն ալ Հայութեան համար կորսուեր են։ Եւ ըսեմ եմ որ Արևելքի կողմերը ցրուած հայ գաղութներն ալ ամէնը հայերէն չեն գիտեր, այլ տեղ տեղ կը խօսին կամ թուրքի, կամ ֆուրդի և կամ ուրիշ ազգի լեզուով։ Արդ, օրինաւոր է այդ Հայերն ալ Հայութենէ դուրս հանել։ Եւ եթէ այդպիսի մա-

քրագործում մը կատարել ուզենք հիմայ և փնտենք Եւրոպայի և Ասիայի և Ամերիկայի և Ովկիանիայի երկրներուն մէջ անգամ տարածուած Հայերը, արդեօք պիտի չստիպուինք աշխարհի վրայ ապրող Հայութեան կէսը հայութենէ դուրս հանելու։ Այո՛, ես ալ ձեզի պէս կը հաստատեմ որ լեզուն զլիաւոր և զօրաւոր կապն է ազգի մը անդամներուն միջեւ, և թէ գուցէ ինչ է այդ կապը կարելի եղածին չափ ամրացնել։ Բայց դուք ալ պէտք է ընդունիք՝ որ լեզուն մի միակ կապը չէ, այլ անկէ դուրս ազգի մը անդամները երկրիս ո՛ր հետաւոր անկուններն ալ ցիրուցան ըլլան՝ իրար հետ կապուած են իրենց աւելցնով, իրենց նախնիներու կեանքով, ըսել կ'ուզեմ պատմութիւնով, իրենց նախնի երկրին կամ բնակարանին յիշատակներով, ըսել կ'ուզեմ աշխարհագրութիւնով, Եւ որ Հունգարիա ծներ ու մներ եմ և երբեք Հայաստանը տեսած չեմ, ինչո՞ւ համար այսօր գծեց հոս տեսնելու՝ կը զգամ իմ մէջս համակրանքէ աւելի ըսեմ ընտանեկան այնպիսի զգացում մը, զոր վստահ եմ պիտի չունենայի՝ եթէ դուք ոտու կամ չիւնացի և կամ ասորի ըլլայիք։ Միթէ հայ արիւնը չէ՞ որ այդ ընտանեկան զգացումը իմ մէջս կը յուզէ։ Եւ այդ ընտանեկան կամ սերնդային ըսեմ յուզումը և զգացումը ո՛րքան աւելի զօրեղ չի՞ ըլլար՝ եթէ ձեզմէ կորսուած հայ անուանած հունգարահայը լաւ սովորած ըլլայ իր հայ նախնի և նոր ժամանակի պատմութիւնն և աշխարհագրութիւնը, որոնք կարծուածն են աւելի մեզ համար պինդ կապեր են՝ որ զմեզ Հայութեան հետ կը զօղեն։ Իմ կարծիքովս ուրեմն այստեղի Միութեան Հայերը կամ ուրիշ Հունգարահայ տեղերու մէջ գտնուող հայ լիզուի ուսուցիչները՝ հայութեան համար օգտակարագոյն բան ըրած պիտի ըլլային՝ եթէ տղայոց սովորեցուցած ըլլային հունգար լեզուով հայ պատմութիւնը, քան թէ հայ լեզուն, զոր (քնակաւն է) ոչ հիմնովին պիտի սովորէին աշակերտք և ոչ

ալ գործածէին, ընդհակառակն ինծի նման շուտով պիտի մոռնային։—Ահաւասիկ, վրայ բերաւ, ահաւասիկ... (Ոգևորումս համաւ կրեկի Դոկտորը քանի մը քայլ հեռացաւ մեզմէ՝ դաւորման դէպ առկիւն մը, ուր խումբ մը տղաներ գոսարբերիս կը փափային, և այդ խումբէն 14ամեայ մանկոյի մը և 12ամեայ փափառն սեւաշեւ աղջկան մը ձեռքէն բռնած՝ մօտեցաւ մեզի՝ խօսքը շարունակելով) Ահաւասիկ երկու ճեղքողներս՝ որոնց ես ինքս կը սովորեցնեմ հայ պատմութիւնն և աշխարհագրութիւնը, և հպարտ կը զգամ ինքզինքս՝ որ կրնամ, Պարոններ, հոս անշուշտ հաճոյական անակնկալ մը պատճառել ձեզի՝ յանպատրաստից փոքրիկ ընծու թիւն մ'ընելով ասոնց ունեցած գիտութիւն։ (Այս խօսքներու վրայ՝ դէպ ի մանկոյր դառնալով՝ ըստ...) — Զուրցէ ինծի, Լաւո, երկրագնդիս վրայ Հայաստանն ո՞ւր կը գտնուի։—Տղան՝ երես ճերմկընելու վստահ դէմքով մը՝ փութաց ըզվընտի եղած սեղանի մը վրայէն խլել հոնգարատառ մեծկակ աշխարհացոյց ատլաս մը, և թուղթերը շրջելով՝ գտաւ Ասիոյ ընդարձակ ճարտ մը, և ձեռքը կապարտապ զբիշ մ'առնելով՝ անով գծեց Հայաստանի նախկին սահմաններն, ցուցնելով և աւելցնելով. «Ահա այսչափ մասը հիմայ Ռուսի Պետութեան ձեռքն է, այսչափը Թուրքիին և այսչափը Պարսիկին»։ — «Ո՞ր է Արաբստ յետը» հարցուց Դոկտորը։ — «Ահա հոս է» ըսաւ տղան՝ այդ լեռան տեղը և անունը ցուցնելով։ — «Ըսէ հիմայ ինծի՝ վրայ բերաւ Դոկտորը — Հայերը ո՞ր ժամանակէն սկսեցին ևս բնակիչ այդ երկրին վրայ, և քանի՞ արքայական հարստութիւն ունեցեր են»։ — Տղան մեր տուած գովաւորներէն աւելի քաջալերուած՝ Զրհեղեղէն սկսած է, ըսաւ, մեր հայրենիքին սկիզբը, և յիշեց Հայկազնանց, Արշակունեաց և այլն՝ հարստութիւնները։ — Կարգն եկաւ փոքրիկ ժողովեային՝ այսինքն Յովսէփոսի, ինչն, որ Դոկտորին հարցմունքներուն հետեւանելով հիանալի համարձակութեամբ մը զուրցեց մեզի թէ ո՞վ էր վարդան և ինչո՞ւ պատերազմեցան Հայերը Պարսիկներուն

դէմ. ո՞վ էր Ս. Գրիգոր Լուսաւորեչ և ո՞վ էր Տրդատ Թագաւորը և Հայերը ինչ կրօնք ունէին առաջ և ի՞նչպէս քրիստոնէութիւնն ընդգրկեցին. որոն աղջիկն էր Զապէլ և որոն հետ ամուսնացաւ, և ո՞ր էր Ռուբինեանց Թագաւորած երկիրը, զոր իր եղբորը պէս ցոյց տուաւ և սահմանագծեց ճարտին վրայ։ Յետոյ եղբայրը վե՛րստին հարցաքննութեան ենթարկուելով՝ ցոյց տուաւ ճարտին վրայ Անի քաղաքին տեղը՝ ըսելով որ Հունգարահայերուն բնագաւառն եղած էր։ — Սրտի գոհութիւնը յայտնապէս կ'երևէր Դոկտորին և տղոց ճակատներուն վրայ՝ երբ մենք և ներկայ գտնուող տեղացի Հայերը զովեստներու և կենցճէներու տարաքի մը կը տեղացնէինք անոնց հասցէին։ — Խնդրեմ, Պարոններ, ըսաւ մեզի այն ատեն Դոկտորը, հաճեցե՞ք դուք ալ Հայ Պատմութեան և Աշխարհագրութեան վրայօք հարցումներ ընել այս տղայոց»։ — Դոկտորին հաճոյք մ'ընելու համար՝ հարցուցի նախ Լաւոյին. «Գիտե՞ս ո՞վ եղաւ Հայոց վերջին Թագաւորը, ինչ թշուառութիւններու ենթարկուեցաւ և ո՞ր մեռաւ»։ Լաւոս առանց վարանելու պատճառ մեզի Լեւոն վեցերորդի կեանքն ու մահը և Պարսիս մէջ թաղուած ըլլալը, դրուատիւններ խլելով ներկայ եղողներէն. «Իսկ դու, սիրտն ժողովրդա, կրնամ ըսել ինծի ո՞վ եղաւ Հայոց վերջին Թագաւորն և ո՞ր մեռաւ»։ Փոքրիկ աղջկան դէմքը մոռայեցաւ. աչքերը դէպ ի Դոկտորը դարձուց, շրթները խաժեց և երեսը կարմրեցած՝ սկսաւ լալ։ — «Կատարեմք Կոստանոյի դէպքը պատմած չեմ իրենց, վրայ բերաւ իսկոյն Դոկտորը, մեզի հետ կարեկցելով ժողովեայի զգացած տագնապին. «Ես եմ մեղաւորը որ այդ անցքը չեմ սովորեցուցած»։ և որպէս զի քովանէ մ'ընել տուած ըլլայ աղջկանը՝ հարցուց. «Ըսէ ինծի, ժողովրդա, Հայերու մէջ ներկայիս քանի՞ կրօնական բաժանում կայ, և ինչո՞ւ թորեքը կը հալածեն ու կ'տորեն Հայերը»։ — Աղջիկը Դոկտորին ծանօթ քաջալերիչ ձայնէն սիրտը առած՝ անուանեց մեր ազգին մէջ եղած կրօնական բաժանումները,

աւելցնելով թէ Հոնգարահայր Կաթողիկէ եկեղեցիին կը պատկանին. բացատրեց թէ ինչպէս Հայերու մէկ մաս մ'ալ բռնի խաւառութիւնն ընդունեն են, և թուրքերու ու Հայերու միջև տեղի ունեցած ներկայիս կրօնական ու ցեղային ու քաղաքական ատելութիւններն ալ յիշելով՝ խօսքը (անշուշտ Դոկտորէն գրուած) այսպէս շնորհալի խորհրդածութեամբ մը լմնացուց. «Հայերը իբրև քրիստոնեայ՝ Քրիստոսի կրեմուսին, որ արդար և տեմնդ ըլլալով հաւոյնք՝ ամեն տեսակ հաղածոնք ու տանջոնքներ կրեց Հրեաներէն, որ Սիմի ցեղէն էին. ամենդ Հայերն ալ կը տանելոյն թորքերէն՝ որ հոյնպէս Սիմի ցեղէն են. քայց ինչպէս վերջը վերջը Քրիստոս յաղրեց Հրեանէն, քան՝ այսպէս ալ Հայերը պիտի յաղրեն թորքերուն » : — Մտաւաճարութիւններու շառաչը կը խղզուէր «կեցցեն Հայերը », « կեցցէ Հայաստան » և նաև « կեցցէ Ժօֆիլան, կեցցէ Լապոն, կեցցէ Դոկտորը » քայնարկութիւններէն : — Այս տեսարանին յաջորդեց՝ հայուն ծանօթ հիւրասիրութեան ցոյցներ՝ տեսակ տեսակ անուշներով և քաղաքիկներով և օշարակներով, և զանազան նիւթերու վրայօք ուրախ զբարթ խօսակցութիւն մը :

Այս երկարատես խօսակցութիւնն երբեմն երբեմն ընդհատեցաւ հայ պատանիներու և օրիորդներու խմբերգներէն, որոնք հունգար երգերու (չաշնակի ընկերակցութեամբ) շարքին մէջ՝ երգեցին հայերէն քառերով նաև քամ փորոտանը, Տուր ձեռքդ հղբայրը, Մեր հայրենիքը, զորս վերոյիշեալ Պոտուրեան Միլիթարեան վարդապետը սովորեցուցեր էր իրենց :

Գիշերուան ժամերը բաւականէն աւելի թուով սահր անցեր էին՝ երբ բնակարանն իր վերադառնալու համար՝ մեկնեցանք այդ ընտանիքէն, զոր կը զգայինք թէ իրաւցնէ արեան կապով մեզ հետ կապուած էր : — Վերը յիշուած ծերունին մինչև բակին դուռը ընկերեց մեզի բազմութեան հետ, կրկնելով.

Մերք. — Տայ Աստուածը որ ալվօշ իրար տեսնունք :

Մենք. — Աստուած ձեզի դեռ շատ երկար օրեր տայ, հայրիկ, որ հայ լեզուն այս քաղաքիս մէջ ձեզմով չմարի :

Մերք. — Իշնական իմ. տայ Աստուածը ձեզիկ ալ բարի գովալալը. ուզի Աստուածը որ չի մեռած տեսնիմ հայ միլիթարին ազատութիւնը, թագաւորութիւնը, — Եւ այս մաղթանքն ըրած ժամանակ՝ ափկից ձեռքերը նուաղած աչքերուն հետ դէպ երկինք կը վերցնէր :

Ահաւասիկ Հայութեան համար կորսուած համարուած Հոնգարահայերու՝ մը տաւոր ճամբորդութեան մը հետեւեց, բայց իրականէ առնուած պատկեր մը :

Հ. ԱՅԱՆԱՍ Վ. ՏՐԻՈՅԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՄՈՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ - ՎԱՐՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Գառզիդ

Լուսթեան և անշրութեան մէջ թաղուած տարիներու շարքը վերջացաւ : Մօտայի գեղածածաղ ափունքներուն վրայ դարձեալ սկսան լուսիլ Միլիթարեան վարժարանի սաներուն զուարթ ձայները, և դպրոցական հանդէսներ կը յաջորդեն իրարու : Թէն Մօտայի վարժարանին նիւթական շէնքը տակաւին աւերակ կը մնայ՝ քայց կրնանք հաճոյցով աւետել թէ ան բարոյապէս արդէն կանգնած է, և շնորհիւ թափուած ջանքերու՝ հին օրերու փայլէն ոչինչ պակաս ունի : Թուիս Դի մրցանակաբաշխութեան հանդէսը ասոր փայլուն ապացոյցը տուաւ :

Վարժարանին ընդարձակ հանդիսարանը շքեղօրէն զարդարուած էր ամենազգի դրօշներով, իսկ թատերաբեմը և վարագոյրը դեռ նոր վարպետին վրձինէն ելած՝ կ'աւելցնէին անոր գեղեցկութիւնը :

Հանդէսին կը նախագահէր Արհ. Յովհաննէս Եպ. Նազլեան, Առաքելական